

Արձանագրություն թիվ 2

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2017թ Հոկտեմբերի 25-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաղորդումը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:
3. Ընթացիկ հարցեր:

1. Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ Գ.Գ.Գրիգորյանը կներկայացնի մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունները:

- Հիշում եք անցյալ ուսումնական տարվա ընթացքում իրականացրել ենք մագիստրոսական ծրագրի հայտի ձևակերպումը: Ծրագրերը ներկայացվել են նոր ձևաչափերով և հաստատվել են: Այժմ պետք է փոփոխություններ կատարվեն բակալավրիատի ուսումնական ծրագրերում: Որոշ առարկաները ժամաքանակները պակասել են, հետևաբար և փափախվել են առարկայի ստուգման կարգը: Պետք է ծրագրերը ներկայացվեն նոր պահանջներին համաձայն: Պետք է հաշվի առնել քննության տեսակները պայմանավորված առարկայի ժամաքանակի հետ: Օրինակը. ինչպես պետք է կազմվեն ծրագրերը կտրվեն ամբիոնների վարիչներին խնդրում եմ պահպանեք ձևաչափերը:

2. Այսօր ամբիոնների վարիչները պետք է ներկայացնեն ամբիոններում գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման հարցը

Ելույթ ունեցան՝

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ռ.Ս.Հարությունյանը նշեց, որ գիտամեթոդական սեմինարները կազմակերպում են հիմնվելով հարցի արդիականության վրա: Սեմինարների ընթացքում իրականացնում ենք նաև

գիտական հոդվածների քննարկում, ինչպես նաև ամբիոնում կատարվող հետազոտությունների արդյունքների և հետագա աշխատանքների ընթացքի քննարկում:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ-պրոֆ. Շ.Ա.Մարգարյան

Ամբիոնում գիտամեթոդական սեմինարներում քննարկվում են վերը նշված բոլոր հարցերից բացի քննարկվում են նաև արտասահմանյան գործուղումների արդյունքները և այնտեղ կիրառվող նորագույն մեթոդներն ու ուսումնասիրության ոլորտները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- պրոֆ. Ն.Ա.Դուրգարյան

Մեր ամբիոնում նույնպես իրականացվում են գիտամեթոդական սեմինարներ, որտեղ ընդգրկվում են բոլոր այն կետերը, որոնք նշեցին նախորդ ամբիոնի վարիչները: Ես ուզում եմ ավելացնել, որ մեր ամբիոնում գիտամեթոդական աշխատանքներին մասնակցում են նաև մագիստրոսները: Նրանք ներկայացնում են նախապես ընտրված աշխատանքները պրեզենտացիայի տեսքով, որից հետո ընթանում է տվյալ աշխատանքի գիտական քննարկում:

3. Խորհրդի նախագահ, պրոֆեսոր- Տ.Վ.Ղռչիկյան

Ընթացիկ հարցերի բաժնում ունենք մի քանի հարց

Ա) Քիմիայի ֆակուլտետի անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ Ռ.Խ.Աղամյանը ֆակուլտետի խորհուրդ է ներկայացրել “Անօրգանական քիմիա” երկու հատորով դասագրքի „Ոչանցումային տարրերի քիմիա” I-հատորը: Գիրքը քննարկվել է ամբիոնում և ստացել դրական արձագանք: Այն քննարկվել է նաև մյուս ամբիոններում: Ելույթ ունեցան պրոֆեսորներ Կ.Ռ.Գրիգորյանը, Շ.Ա.Մարգարյանը, դոցենտներ Ա.Ի.Մարտիրոսյանը, Ռ.Պ.Մխիթարյանը: Նրանք նշեցին, որ գիրքն անհրաժեշտ է ինչպես դասախոսների, ուսանողների, այնպես էլ դպրոցի ուսուցիչների համար՝ աշակերտներին ավելի խորացված գիտելիքներ տալու համար: Նրանք նշեցին, որ պետք է շարունակել գործընթացը, երաշխավորել հրապարակման և տալ այն արտաքին գրախոսման:

Գիտական խորհուրդը միաձայն որոշեց տալ վերոհիշյալ աշխատանքը գրախոսման ՎՊՀ- կենսաքիմիայի և ՀԱԱՀ-ի ընդհանուր քիմիայի ամբիոն:

Բ) Տ.Վ.Ղռչիկյան – Նոյեմբերի նիստում պետք է հաստատվեն Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերը: Վերջին

տարիներին մեր ֆակուլտետում չեն նկատվել ավարտական աշխատանքների և թեզերի վերնագրերի կրկնություն. պահպանեք այդ:

Գ) Տ.Վ.Ղոչիկյան-ԵՊՀ ռեկտորատը հայտարարել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլը: Մեր ֆակուլտետից ում թեկնածությունն էք առաջարկում այդ մրցույթին մասնակցելու համար:

Պրոֆ. Ն. Ա. Դուրգարյանը, Կ. Ռ. Գրիգորյանը, Տ.Վ.Ղոչիկյանը, դոցենտ Ռ. Մխիթարյանը առաջարկեցին “Քիմիա” մասնագիտությամբ երկրորդ կուրսի ուսանող Ս.Վ.Գրիգորյանի թեկնածությունը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Ս. Վ. Գրիգորյանը համալսարանի մագիստրատուրայի ուսման գերազանցիկ է, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ֆակուլտետի հասարակական կյանքին: Ունի մի քանի գիտական հոդված(տեղական և արտասահմանյան ամսագրերում), բանավոր և պոստեր գեկույցներով մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների:

Ելույթ ունեցողների առաջարկությունը պաշտպանեցին նաև խորհրդի մյուս անդամները:

Որոշեցին-Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Ս. Վ. Գրիգորյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Դ) Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանը նշեց, որ Նոյեմբերի 24-ին տեղի կունենա ֆակուլտետի ընդլայնված նիստ, որտեղ կլսվի ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը: Կքննակվի նաև ֆակուլտետին հուզող հարցերը և խնդիրները:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան